# ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔ

Հոկտեմբերի 25-ին Երևանի ԼԿԵՄ Մոլոտովյան ռայկոմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ արտասահմանից ներգաղթած հայ երիտասարդության հավաք: Հավաքում «Սովետական երիտասարդության իրավունքները» թեմայով զեկուցում տվեց ԼԿԵՄ Երևանի Քաղկոմի քարտուղար ընկ. Հ. Սարգսյանը: Ներգաղթած հայ երիտասարդները զեկուցումը լսեցին մեծ հետաքրքրությամբ, տվեցին մի շարք հարցեր, որոնց պատասխանեց զեկուցողը:

Վերջում հավաքի մասնակիցների համար Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնի դերասանների ուժերով բեմադրվեց Սունդուկյանի «Գիշերվան սաբրը խեր է» կոմեդիան:

AVANGARD | October 26, 1946